Կարգապահական գործ թիվ ԿԳ-23016

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԳԱՐԻԿ ԳՐԻԳՈՐԻ ԳԱԼԻԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Հայկ Սահակյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Կարինե Բաղդասարյանի, Գուրգեն Թորոսյանի, Արաքս Վարդանյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ Դիմող Գագիկ Վարդանյանի, Դիմողի ներկայացուցիչ Մանուշակ Թադևոսյանի

քննության առնելով փաստաբան Գարիկ Գրիգորի Գալիկյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 644), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

<u>1.1 Կարգապահական վարույթ հարուցելու առիթը</u>

Պալատին է դիմել Գագիկ Նորիկի Վարդանյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**):

«Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 39.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝* ***անձի****, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների* ***հաղորդումը***:

Նշված նորմից հետևում է, որ ցանկացած անձ (ֆիզիկական և իրավաբանական)

կարող է բողոք ներկայացնել և բարձրացնել փաստաբանի վարքագծի հարց, բացառությամբ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք)** 2.6.4 ենթակետի (առնչվում են վստահորդների հետ փոխհարաբերություններին) խախտման հարցերի:

Տվյալ դեպքում, Դիմողի բողոքն ընդունվում է՝ որպես անձի կողմից ներկայացված հաղորդում՝ կարգապահական վարույթ հարուցելու առիթ:

1.2 Կարգապահական վարույթ հարուցելու հիմքը

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:*

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության նույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, իսկ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի կամ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի և «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի կամ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտելու համար՝ կարգապահական, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով նախատեսված պատասխանատվության:*

Օրենքի 39.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ ի թիվս այլնի, Օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *կարգապահական վարույթի հարուցումը մերժվում է, եթե՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն առերևույթ բացակայում են:*

2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Գարիկ Գրիգորի Գալիկյանին առաջարկվել է մինչև 2023 մարտի 9-ը ներկայացնել բացատրություն Գագիկ Վարդանյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 2023 թվականի մարտի 17-ին ներկայացրել է բացատրություն՝ հայտնելով, որ ներկայացված դիմումը ամբողջությամբ անհիմն է և չի համապատասխանում իրականությանը:

Փաստաբանը հայտնել է, որ փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը «Գալիկյան» ՍՊ ընկերության և Գագիկ Նորիկի Վարդանյանի միջև կնքվել է 2015 թվականի ապրիլի 7-ին, որով Կատարողը ստանձնել է ներկայացնել Պատվիրատուի շահերը դատական բոլոր ատյաններում:

Պայմանագրի 3.1. կետի համաձայն՝ Պատվիրատուն Կատարողին պետք է վճարի 1.890.000 (մեկ միլիոն ութ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ, համաձայն 3.2. կետի Պատվիրատուն գումարից 475.000 (չորս հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամը վճարում է նախապես՝ 07.04.2015թ., իսկ մնացած 1.415.000 ՀՀ դրամը գործի ընթացքում:

Կնքված Պայմանագրի շրջանակում Գագիկ Վարդանյանը Կատարողին հայտնել է, որ գումար է տվել ոմն մեկին, որի դիմաց տուն է գնել, սակայն գործարքն իրավաբանորեն չի ձևակերպվել, այսինքն՝ առկա էր չկնքված գործարք:

Գործը ստանձնելուց և ուսումնասիրությունից հետո պարզվել է, որ տվյալ գործի փաստական հանգամանքները չեն համապատասխանում Գագիկ Վարդանյանի կողմից ներկայացվածին: Դրանից հետո, պարզելով, որ կատարվել են այնպիսի գործողություններ, ինչի արդյունքում այլևս հնարավոր չէ արդյունքի հասնել օրինակ վերջնական դատական ակտի տեսքով, այլ կերպ ասած, գործի ընթացքը իրավական առումով անբարենպաստ հետևանքներ կառաջացնի Գագիկ Վարդանյանի համար, նրան տեղեկացրել է, որ օրենքի շրջանակում հնարավոր բոլոր եղանակներով կփորձի այնպես անել, որ հնարավորություն ստեղծվի կասեցնել վտարման գործընթացը, իսկ այդ ընթացքում Գագիկ Վարդանյանը կփորձի կարգավորել իր հարցերը, և այդպես էլ եղել է, վտարման գործընթացը տարիներ ի վեր կասեցված է եղել, իսկ այդ ընթացքում Գագիկ Վարդանյանը գրեթե միշտ իր բոլոր հարցերով, բացի քննարկվող գործը, դիմել է իր կողմից ղեկավարած փաստաբանական գրասենյակ և գրասենյակի աշխատակիցները, այդ թվում նաև՝ ինքը, հնարավոր բոլոր եղանակներով, աջակցել են վերջինիս:

Գագիկ Վարդանյանը բազմիցս զգուշացվել է այն մասին, որ կնքված Պայմանագրում կա կետ, որի համաձայն վերջինս պարտավորվում է չխոչընդոտել Կատարողի գործողություններին, աջակցել վերջինիս՝ գործի /գործարքի/ վերաբերյալ տեղեկություններ/ապացույցներ տրամադրելուն և այլ միջոցներին:

Ըստ Փաստաբանի՝ Գագիկ Վարդանյանը չհետևելով հորդոր-պահանջներին՝ դիմել է տարբեր պետական մարմինների, այլ անհատ փաստաբանների և փաստաբանական

գրասենյակների, իր խնդրի վերաբերյալ խորհուրդներ հարցնելու համար: Ներկայացրել է տարբեր դիմումներ պետական մարմիններին, դրանով իսկ խոչընդոտելով իմ և գրասենյակի աշխատակիցների կատարած աշխատանքին:

Վերը նշվածի ապացույցն է հանդիսանում թիվ ԵԴ/38732/02/19 քաղաքացիական գործը, համաձայն որի՝ հայցադիմումը Գագիկ Վարդանյանի կողմից դատարան է ներկայացվել 2019 թվականի նոյեմբերի 08-ին, ըստ պահանջի՝ առոչինչ գործարքի նկատմամբ անվավերության հետևանքներ կիրառելու մասին:

Ըստ Փաստաբանի՝ քննվող թիվ ԵԴ/38732/02/19 քաղաքացիական գործի վերաբերյալ տեղեկություն շատ պատահաբար իմացել է իր գրասենյակում աշխատողը, իսկ այդ մասին նրան հայտնել է այդ գործով պատասխանող կողմի ներկայացուցիչը:

Հիշյալ քաղաքացիական գործի վերաբերյալ Փաստաբանը տեղեկացված չի եղել, բայց այդ ժամանակահատվածում ևս Գագիկ Վարդանյանը իր գործի համար պարբերաբար այցելել է գրասենյակ, և նրան ընթացքի հետ կապված խորհրդատվություն միշտ տրամադրվել է: Փաստաբանի պնդմամբ չի կարող հստակ հիշել ամիս ամսաթիվը, սակայն հստակ հիշում է, որ դա եղել է 2020 թվականը, քանի որ 2020 թվականից ի վեր Գագիկ Վարդանյանին հայտնել է, որ այլևս նրա գործով չի զբաղվելու:

Բայցևայնպես, դրանից հետո մի քանի անգամ՝ 2021 թվականի ընթացքում վերջինս տարբեր հարցերով մոտեցել է գրասենյակ, և գրասենյակի աշխատակիցները նրան ընդունել և լսել են:

Փաստաբանը հավելել է նաև, որ Դիմողից ընդհանուր իրավաբանական ծառայությունների համար ստացել է 1.190.000 ՀՀ դրամ:

Գագիկ Վարդանյանի կողմից չի վճարվել Պայմանագրով սահմանված ամբողջական գումարը, և վերջինս պարտք է մնացել ծառայության վճար՝ 700.000 ՀՀ դրամի չափով, իսկ վերջին վճարումը կատարվել է 2019 թվականին, սակայն ինքը չի դիմել մնացած պարտավորությունը կատարելու պահանջով, հասկանալով վերջինիս շուրջ ստեղծված իրավիճակը և այն գիտակցումով, որ այլևս չի զբաղվում նրա գործով:

Փաստաբանը նաև հավելել է, որ նյութեր և ապացույցներ ներկայացնելու հնարավորություն չունի, քանի որ նյութերը երեք տարի պահվելուց հետո ոչնչացվել են, իսկ այն փաստաթղթերը, այդ թվում՝ բնօրինակները, որոնք ենթակա էին վերադարձման, վերադարձել է Գագիկ Վարդանյանին:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 23.03.2023թ. թիվ 87-Ա/ԿԳ-23016 որոշմամբ փաստաբան Գարիկ Գրիգորի Գալիկյանի նկատմամբ Օրենքի **19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև Կանոնագրքի **3.5.5 և 3.8.4 ենթակետերի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

29.03.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 28.04.2023թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ Աշխատակիցը հաստատված է համարել միայն սույն որոշման 5-րդ բաժնում նշված փաստեր № 1-4, 7, 9, 11-14, 16-18-ը: Աշխատակիցը հաստատված չի համարել սույն որոշման 5-րդ բաժնում նշված փաստեր № 20-ը և 21-ը:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Գարիկ Գալիկյանը ստանձնել է Գագիկ Վարդանյանի շահերի պաշտպանությունը: *Սույն փաստը հաստատվում է «Գալիկյան» ՍՊԸ-ի և Գագիկ Վարդանյանի միջև 07.04.2015թ. կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի **(այսուհետ՝ Պայմանագիր)** պատճեով:*

2. Պայմանագրի 1.1. ենթակետի համաձայն՝ պատվիրատուի հանձնարարությամբ կատարողը ստանձնում է ներկայացնել պատվիրատուի շահերը դատական բոլոր ատյաններում: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և «Գալիկյան» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի պատճեով:*

3. Պայմանագրի գինը կազմել է 1.890.000 (մեկ միլիոն ութ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ, որից 1.190.000 (մեկ միլիոն հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ Դիմողի կողմից վճարվել է: *Սույն փաստը հաստատվում է Պայմանագրի պատճեով, ինչպես նաև դրամարկղային մուտքի օրդերների պատճեներով:*

4. Գագիկ Վարդանյանը լիազորել է փաստաբան Գարիկ Գալիկյանին և Մարինե Եսայանին իրեն ներկայացնելու բոլոր դատական ատյաններում՝ օժտելով իր անունից դատավարական և այլ գործողություններ իրականացնելու իրավունքով, այդ թվում՝ ստորագրել հայցադիմումը, փոխել հայցի առարկան և դրա հիմքը և այլն: *Սույն փաստը հաստատվում 07.04.2015թ. տրված լիազորագրի պատճեով:*

5. Փաստաբանը Դիմողին փաստաբանական ծառայություն մատուցելու ամբողջ ընթացքում միշտ ասում էր Դիմողին, որ ինչքան շատ Դիմողն ապրի այդ տանը, այդքան իր Դիմողի օգուտը կլինի, ինչքան ժամանակ Դիմողը շահի այնքան լավ կլինի Դիմողի

համար: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի դիմումով:*

6. Փաստաբանն իր բացատրության մեջ նշել է, որ Դիմողին տեղեկացրել է, որ օրենքի շրջանակներում հնարավոր բոլոր եղանակներով կփորձի այնպես անել, որ հնարավորություն ստեղծվի կասեցնել վտարման գործընթացը, իսկ այդ ընթացքում Դիմողը կլուծի իր հարցերը: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի 2023 թվականի մարտի 17-ին կազմված և Պալատ 611-23 համարով մուտքագրված բացատրությամբ:*

7. 17.09.2015թ. Փաստաբանը ՀՀ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան **(այսուհետ՝ Դատարան)** է հասցեագրել հայցադիմում՝ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին, որը ստացել է ԵԱԴԴ/3529/02/15 համարը: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

8. Դատարանը 2015 թվականի սեպտեմբերի 23-ին կայացրել է որոշում, որով բավարարել է հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը և արգելվել է Արտակ Մարգարյանին և «Էքսպրես կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲ ընկերությանն օտարել կամ որևէ այլ ձևով իրացնել Երևան քաղաքի Դավթաշեն 1-ին թաղամասի 29/31-րդ հասցեում գտնվող բնակելի շենքի 4-րդ հարկի թիվ 48 բնակարանը: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

9. 28.12.2017թ. թիվ ԵԱԴԴ/3529/02/15 քաղաքացիական գործը կարճվել է հայցվորի ներկայացուցչի կողմից՝ հայցից հրաժարվելու հիմքով: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

10. ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 1-ին թղմ., 29/31 հասցեում գտնվող անշարժ գույքի հասցեն, փոփոխվել է և այժմ դարձել է ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 1-ին թղմ., 29/47: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի դիմումով:*

11. 03.03.2020թ. թիվ ԵԴ/8130/02/20 քաղաքացիական գործով Լիլիթ Գևորգի Սեդրակյանը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ պատասխանողներ ***Գագիկ Նորիկի Վարդանյանի,*** Մանուշակ Վաղուշի Թադևոսյանի, Կարինե Գագիկի Վարդանյանի, Էլեն Կարենի Բիլյանի՝ խնդրելով պատասխանողներին վտարել ք. Երևան, Դավթաշեն 1-ին թաղ., թիվ 29/47 բնակելի տուն հասցեում գտնվող Լիլիթ Սեդրակյանին սեփականության իրավունքով բնակարանից: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

12. 06.04.2022թ. թիվ ԵԴ/8130/02/20 քաղաքացիական գործով Պատասխանողի (Դիմող՝ Գագիկ Նորիկի Վարդանյանի) ներկայացուցիչ Գարիկ Գալիկյանը դատարան է հասցեագրել դիմում՝ Գործի վարույթը կարճելու վերաբերյալ: *Սույն փաստը հաստատվում 06.04.2022թ. դատարան հասցեագրված դիմումի պատճեով:*

13. **24.06.2022թ.** Դատարանը վճռել է.

1) Լիլիթ Գևորգի Սեդրակյանի հայցապահանջն ընդդեմ պատասխանողներ ***Գագիկ Նորիկի Վարդանյանի***, Մանուշակ Վաղուշի Թադևոսյանի, Կարինե Գագիկի Վարդանյանի, Էլեն Կարենի Բիլյանի՝ անշարժ գույքից վտարելու վերաբերյալ, բավարարել.

պատասխանողներ ***Գագիկ Նորիկի Վարդանյանին***, Մանուշակ Վաղուշի Թադևոսյանին, Կարինե Գագիկի Վարդանյանին, Էլեն Կարենի Բիլյանին վտարել քաղաք

Երևան, Դավթաշեն 1-ին թաղամաս, թիվ 29/47 բնակելի տուն հասցեում գտնվող, հայցվոր Լիլիթ Սեդրակյանի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքից:

2) Պատասխանողներ ***Գագիկ Նորիկի Վարդանյանից***, Մանուշակ Վաղուշի Թադևոսյանից, Կարինե Գագիկի Վարդանյանից, Էլեն Կարենի Բիլյանից համապարտության կարգով, հօգուտ հայցվոր Լիլիթ Գևորգի Սեդրակյանի, բռնագանձել 4.000 /չորս հազար/ ՀՀ դրամ՝ որպես հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար, և 80.000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար»:

Թիվ ԵԴ/8130/02/20 քաղաքացիական գործը չի բողոքարկվել, որի հիման վրա 28.04.2023թ. Դատարանի կողմից տրվել է կատարողական թերթ: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով, ինչպես նաև կատարողական վարույթ հարուցելու որոշման պատճեով:*

14. Գագիկ Նորիկի Վարդանյանի ներկայացուցիչ՝ Կարինե Ղաշանգյանի *(ըստ Փաստաբանի՝ Կարինե Ղաշանգյանը հանդիսանում է «Գալիկյան» ՍՊԸ- աշխատակից)* կողմից 10.08.2021 թվականին հայցադիմում է ներկայացվել Դատարան ընդդեմ Հայաստանի Հանրապետության ոստիկանության՝ պատասխանողին ք. Երևան, Դավթաշեն 1-ին թաղամաս 29/47 բնակարանից հայցվորին և իր ընտանիքի անդամներին վտարելու գործողության իրականացումից ձեռնպահ մնալուն պարտավորեցնելու պահանջի մասին, որը ստացել է թիվ ՎԴ/8884/05/21 համարը: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

15. ՀՀ վարչական դատարանը 2021 թվականի օգոստոսի 17-ին կայացրել է որոշում, որով, որոշել է Գագիկ Նորիկի Վարդանյանի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու վերաբերյալ, բավարարել՝ արգելել Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը իրականացնելու վտարելու գործողություն ք. Երևան, Դավթաշեն 1-ին թաղամաս 29/47 բնակարանից մինչև սույն գործով վերջնական դատական ակտի կայացումը: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

16. 28.07.2022թ. Դատարանը որոշել է՝ թիվ ՎԴ/8884/05/21 վարչական գործի վարույթը կարճել այն հիմքով, որ թիվ ԱՎԴ1/1558/02/18 քաղաքացիական գործով 08.07.2021թ. կայացված վճիռն օրինական ուժի մեջ է մտել 06.04.2022 թվականին (թիվ ՎԴ/8884/05/21 վարչական գործով հայցվորն իր հայցապահանջը պայմանավորել է ք. Երևան, Դավթաշեն 1-ին թաղամաս 29/47 բնակարանի վերաբերյալ քաղաքացիաիրավական վեճի լուծմամբ՝ ակնկալելով, որ այդ վեճի լուծման արդյունքում ձեռք կբերի սեփականության իրավունք խնդրո առարկա բնակարանի նկատմամբ): Թիվ ՎԴ/8884/05/21 վարչական գործով՝ Դատարանի 28.07.2022թ. որոշումը չի բողոքարկվել: *Սույն փաստերը հաստատվում են «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

17. Գագիկ Նորիկի Վարդանյանի ներկայացուցիչ՝ Կարինե Ղաշանգյանի *(ըստ Փաստաբանի՝ Կարինե Ղաշանգյանը հանդիսանում է «Գալիկյան» ՍՊԸ- աշխատակից)* կողմից 07.09.2018 թվականին հայցադիմում է ներկայացվել Դատարան ընդդեմ Արտակ

Հենրիկի Մարգարյանի՝ գործարքը վավեր ճանաչելու պահանջի մասին: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

18. 08.07.2021թ. թիվ ԱՎԴ1/1558/02/18 քաղաքացիական գործով Դատարանը վճռել է. «Գագիկ Նորիկի Վարդանյանի ընդդեմ Արտակ Հենրիկի Մարգարյանի, երրորդ անձ՝ Լիլիթ Գևորգի Սեդրակյանի՝ 15.09.2013թ. Գագիկ Վարդանյանի և Արտակ Վարդանյանի միջև կնքված Երևան քաղաքի, Դավթաշեն 1-ին թաղամաս 29/47 բնակելի տուն հասցեում գտնվող անշարժ գույքի առու վաճառքի պայմանագիրը վավեր ճանաչելու պահանջի մասին հայցը մերժել հայցային վաղեմություն կիրառելու հիմքով»: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

19. 17.08.2021թ. ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 08.07.2021 թվականի վճռի դեմ հայցվոր Գագիկ Վարդանյանի անունից Կարինե Ղաշանգյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը Վերաքննիչ դատարանի՝ 15.09.2021թ. որոշմամբ վերադարձվել է:

- 28.09.2021 թվականին վերաքննիչ բողոքը ներկայացվել է կրկին, որը Վերաքննիչ դատարանի՝ 13.10.2021թ. որոշմամբ կրկին վերադարձվել է այն հիմքով, որ 28.09.2021 թվականին ներկայացված վերաքննիչ բողոքը ստորագրել է փաստաբան Կարինե Ղաշանգյանը, մինչդեռ բողոքին կից կամ քաղաքացիական գործում առկա չէ Կարինե Ղաշանգյանի՝ Գագիկ Վարդանյանի անունից վերաքննիչ բողոքը ստորագրելու լիազորությունը հավաստող փաստաթուղթ: Քաղաքացիական գործում առկա է Գագիկ Վարդանյանի կողմից Կարինե Ղաշանգյանին 27.08.2018 թվականին 3 տարի ժամկետով հասարակ գրավոր ձևով տրված լիազորագիր (հիմք՝ գործ հատոր 1, թերթ 12), ինչը չի կարող դիտվել որպես վերաքննիչ բողոքը ստորագրելու լիազորությունը հավաստող ապացույց այն հիմնավորմամբ, որ կրկին վերաքննիչ բողոքի ներկայացման օրվա դրությամբ տվյալ լիազորագրի գործողության ժամկետն արդեն իսկ լրացած է եղել:
- Գագիկ Վարդանյանի ներկայացուցիչ՝ Կարինե Ղաշանգյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք և պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 13.10.2021 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը և փոփոխել այն:
- Վճռաբեկ Դատարանը 17.01.2022թ. վերադարձրել է վճռաբեկ բողոքը:
- Գագիկ Վարդանյանի ներկայացուցիչ՝ Կարինե Ղաշանգյանը սահմանված ժամկետում կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 06.04.2022 թվականի որոշմամբ՝ բողոքը վարույթ ընդունելը մերժել է: *Սույն փաստերը հաստատվում են «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

20. Փաստաբանը Դիմողին չի վերադարձրել որևէ գումար: *Սույն փաստը հաստատվում 23.05.2023թ. գրությամբ:*

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված չի համարում հետևյալ փաստերը.

21. «Գալիկյան» ՍՊԸ-ի և Գագիկ Վարդանյանի միջև 07.04.2015թ. կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի լուծված լինելու և

2020թ. հետո Գագիկ Վարդանյանի գործով չզբաղվելու փաստերը: *Սույն փաստերը հաստատված չեն համարվում, քանի որ Փաստաբանը 06.04.2022թ. դատարան է հասցեագրել դիմում՝ Գործի վարույթը կարճելու վերաբերյալ, ինչպես նաև 17.08.2021թ. մինչև 07.03.2022թ. «Գալիկյան» ՍՊԸ- աշխատակից Կարինե Ղաշանգյանը փաստացի մատուցել է փաստաբանական ծառայություններ:*

22. Գագիկ Վարդանյանի կողմից 07.04.2015թ. կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի որևէ կետի խախտման հանգամանքը: *Սույն փաստերը հաստատված չի համարվում, քանի որ թիվ ԵԴ/38732/02/19 քաղաքացիական գործից չի հետևում, որ Դիմողը դիմել է այլ փաստաբանի՝ իրավաբանական օգնություն ստանալու համար: Հարկ է նաև նշել, որ թիվ ԵԴ/38732/02/19 քաղաքացիական գործը 16.10.2020թ. թողնվել է առանց քննության, իսկ Դիմողը նշել է, որ վերը նշված գործի մասին իմացել է 2020թ.: Հարկ է նաև նշել, որ Փաստաբանը չի ներկայացրել որևէ ապացույց Դիմողի կողմից պետական մարմիններ և այլ փաստաբանների դիմելու վերաբերյալ, ինչպես նաև չի հիմնավորել թիվ ԵԴ/38732/02/19 քաղաքացիական գործի առկայությամբ փաստաբանական գրասենյակի աշխատակիցների աշխատանքին խոչընդոտելու հանգամանքը, հաշվի առնելով նշված գործի կապակցությամբ Փաստաբանի կողմից ներկայացված դիրքորոշումը այն մասին, թե. «Նրան տեղեկացրել եմ, որ օրենքի շրջանակներում հնարավոր բոլոր եղանակներով կփորձեմ այնպես անել, որ հնարավորություն ստեղծվի կասեցնել վտարման գործընթացը» և այն հանգամանքը, որ թիվ ԵԴ/38732/02/19 քաղաքացիական գործը փաստացի վերաբերում է առոչինչ գործարքի նկատմամբ անվավերության հետևանքներ կիրառելու պահանջին:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Գարիկ Գալիկյանը փաստաբան է հանդիսանում 9.11.2006թ. թվականից, և 2019-2023թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ (մինչ այդ նշանակված կարգապահական տույժերը համարվում են մարված):

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Գարիկ Գալիկյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 և 3.8.4 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:*

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ...* :

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան

խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Գարիկ Գալիկյանի նկատմամբ Կանոնագրքի 3.5.5 և 3.8.4 ենթակետերի պահանջների ենթադրյալ խախտման համար հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Հանձնաժողովը Փաստաբանին կարգապահական պատասխանատվության հարցը որոշելու համար անհրաժեշտ է համարում Փաստաբանին վերագրվող վերը նշված Կանոնագրքի առերևույթ խախտումներին անդրադառնալ առանձին-առանձին:

7.1 Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի ենթադրյալ խախտման մասով Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել հետևյալը.

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին* ***իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն****, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. ***վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,***

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **(այսուհետ՝ Օրենսգիրք)** 562-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:***

Օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***գործարքի նոտարական ձևը չպահպանելը*** *հանգեցնում է* ***գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է****:*

Օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***անշարժ գույքի հետ կապարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:***

Օրենսգրքի 302-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *գործարքներից ծագող իրավունքների* ***պետական գրանցման պահանջը չպահպանելը*** *հանգեցնում է դրա անվավերության:* ***Նման գործարքն առոչինչ է:***

Օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***գործարքն անվավեր է*** *սույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ* ***անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):***

Օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների****, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ:* ***Նման գործարքն անվավեր է կնքելու պահից:***

Օրենսգրքի 289-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝***գործարքները քաղաքացիների*** *և իրավաբանական անձանց* ***այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ*** *և պարտականություններ* ***սահմանելուն****, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:*

Օրենսգրքի 561-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***վաճառողը,*** *անշարժ գույքի առուվաճառքի (այսուհետ՝ անշարժ գույքի վաճառքի) պայմանագրով* ***պարտավորվում է գնորդի սեփականությանը հանձնել*** *հողամաս, շենք, շինություն,* ***բնակարան կամ այլ անշարժ գույք*** *(հոդված 134):*

Օրենսգրքի 274-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջել ուրիշի ապօրինի տիրապետումից****:*

Օրենսգրքի 203-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին նախադասության համաձայն՝ *հողամասի,* ***շենքի*** *կամ շինության կամ այլ անշարժ գույքի տարածքի* ***օրինական տիրապետողն իրավունք ունի*** *լիազորելու* ***ոստիկանությանը՝*** *իր անունից* ***կատարելու գործողություններ՝*** <u>*ներխուժումը կանխելու կամ վերացնելու ուղղությամբ:*</u>

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***գործողության կատարման հայցով հայցվորը*** *կարող է պահանջել կատարելու որոշակի գործողություններ կամ* ***ձեռնպահ մնալու այնպիսի գործողություններից****,* ***որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը:***

Նույն օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *պարտավորեցման,* ***գործողության կատարման*** *կամ ճանաչման* ***հայցերի դեպքում վարչական դատարանը դատավարության մասնակցի միջնորդությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար,*** *եթե նման միջոցներ չձեռնարկելը* ***կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը:***

Նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի իմաստով՝ ***հայցի ապահովման միջոց է՝***

դատավարության մասնակցին որոշակի գործողություն կատարելն արգելելը:

Կանոնագրքի վերը հիշատակված կանոնի և վերը նշված իրավական նորմերի հետ տառացի վերլուծության և համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ իր մասնագիտական պարտավորությունները կատարել բարեխղճորեն, մասնավորապես՝ իրազեկել վստահորդի հանձնարարության կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին: Այսինքն փաստաբանը պարտավոր է տեղեկացնել իր վստահորդին իրավական խնդրի լուծման հետևանքով օրենքի ուժով իր վստահորդի համար հնարավոր անբարենպաստ իրավական հետևանքների առաջացումն, այն դեպքերում, երբ դրանք կարող են առաջանալ փաստաբանի կամքից անկախ, վստահորդի կողմից կատարված ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով:

Միաժամանակ հարկ է նկատի ունենալ, որ քաղաքացիների այն գործողությունները, որոնք, մասնավորապես, ուղղված են իրավունքներ սահմանելուն համարվում են գործարքներ: Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, որտեղ գնորդը և վաճառողը քաղաքացիներ են, որպես գործարք ուղղված է գնորդի մոտ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք սահմանելուն: Ընդ որում, անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը պարտադիր ենթակա է նոտարական վավերացման: Անշարժ գույքի հետ կապված ցանկացած գործարքից, այդ թվում առուվաճառքից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման: Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը նոտարական կարգով չվավերացնելը, ինչպես նաև այդ պայմանագրից բխող գնորդի սեփականության իրավունքի պետական գրանցում չկատարելը հանգեցնում է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի անվավերության: Նման պայմանագիրը առոչինչ է և անվավեր է կնքման պահից, անկախ այդ պայմանագիրն դատարանի կողմից այդպիսին ճանաչելուց:

Անշարժ գույքի առուվաճառքի առոչինչ գործարքը որևէ իրավական հետևանք չի առաջացնում, այսինքն այդ գործարքի կնքման արդյունքում գնորդի մոտ գործարքի առարկա հանդիսացող անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը չի ծագում: Հետևաբար նման առոչինչ գործարքի հիման վրա գնորդի կողմից անշարժ գույքի տիրապետումն անօրինական է:

Միաժամանակ նոտարական ձևով կնքված գործարքի և այդ գործարքից ծագած սեփականության իրավունքի պետական գրանցման կատարման հիման վրա վերը նշված անշարժ գույքը ձեռք բերած անձը տիրապետում է այն օրինական եղանակով և իրավունք ունի վերը նշված անձի ապօրինի տիրապետումից հետ պահանջել այդ անշարժ գույքը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի հիման վրա դատարան վտարման հայց ներկայացնելու միջոցով: Անշարժ գույքի սեփականատերն այդ գույքն ապօրինի տիրապետողներից կարող է պաշտպանվել նաև ՀՀ ոստիկանությանը ներխուժումը

կանխելու գործողություններ կատարելուն լիազորելու եղանակով: Ընդ որում, ՀՀ ոստիկանության կողմից ներխուժումը կանխելու գործողությունները կարող են վիճարկվել ՀՀ վարչական դատարանում գործողությունների կատարման հայց ներկայացնելու միջոցով: Գործողությունների կատարման հայցով դատարանը կարող է դատավարության մասնակցի միջնորդությամբ ձեռնարկել հայցի ապահովման միջոց, եթե այդպիսի միջոց չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել հայցը բավարարող դատական ակտի կատարումը: Հայցի ապահովման միջոցի տեսակ է դատավարության մասնակցին, մասնավորապես՝ պատասխանողին, որոշակի գործողություններ կատարելն արգելելը:

Տվյալ դեպքում Դիմողը դիմել էր Փաստաբանին, որպեսզի ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 1-ին թղմ., 29/31 հասցեում գտնվող 4-րդ հարկի թիվ 48 բնակարանի նկատմամբ ձևակերպվի Դիմողի սեփականության իրավունքը, իսկ այդ բնակարանը մնա իր տիրապետության տակ: Հարկ է նկատի ունենալ որ Դիմողը նշված բնակարանը ձեռք է բերել ստորագրելով «Պարտավորագիր» վերտառությամբ փաստաթուղթը, որով Արտակ Հենրիկի Մարգարյանը (անձնագիր՝ AM02052478, տրված 11.02.2011 թ., 001-ի կողմից) պարտավորվել է 51000 (հիսուն մեկ հազար) ԱՄՆ դոլար պարտքի դիմաց, Դիմողին սեփականության իրավունքով հանձնել իրեն պատկանող և կնոջ կողմից լիազորագրի հիման վրա տրված ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 1-ին թղմ., 29/31 հասցեում գտնվող 4-րդ հարկի բնակարանը **(այսուհետ՝ Անշարժ գույք):** Պարտավորագիրը կնքվել է հասարակ գրավոր ձևով, նոտարական կարգով չի վավերացվել, իսկ Պարտավորագրից բխող Դիմողի սեփականության իրավունքի պետական գրանցում ՀՀ կադաստրի կոմիտեում չի կատարվել: Ստացվում է, որ Պարտավորագիրն առոչինչ գործարք է, որևէ իրավական հետևանք չի առաջացնում, այսինքն Պարտավորագրից բխող Դիմողի սեփականության իրավունքը չի ծագում: Այլ կերպ ասած Պարտավորագրի առարկա հանդիսացող Անշարժ գույքը Դիմողի սեփականությունը չէ: Հանձնաժողովը հարկ է համարում նաև ընդգծել այն հանգամանքը, որ ինչպես նշվել է Դիմողի դիմումում ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 1-ին թղմ., 29/31 հասցեում գտնվող անշարժ գույքի հասցեն, փոփոխվել է և այժմ դարձել է ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 1-ին թղմ., 29/47:

Փաստաբանը իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ իր մասնագիտական պարտականությունները կատարել է բարեխղճորեն: Վստահորդին բացատրել է հանձնարարության կատարման հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին: Մասնավորապես Փաստաբանն իր բացատրություններում նշել է, հետևյալը.

«Գտնում եմ, որ Գագիկ Վարդանյանին ցուցաբերված մասնագիտական օգնությունը իրականացվել է բարեխղճորեն, անհրաժեշտ գործողությունները եղել են կանոնակարգված, ժամանակին կատարված, ***միաժամանակ, ամբողջ ընթացքում Գագիկ Վարդանյանը տեղեկացված է եղել, թե ինչ հետևանքներ են առաջանալու,***

նրան տեղեկացրել եմ, որ օրենքի շրջանակներում ***հնարավոր բոլոր եղանակներով կփորձեմ այնպես անել, որ հնարավորություն ստեղծվի կասեցնել վտարման գործընթացը, իսկ այդ ընթացքում Գագիկ Վարդանյանը կփորձի կարգավորել իր հարցերը, և այդպես էլ եղել է, վտարման գործընթացը տարիներ ի վեր կասեցված է եղել*** *...»:*

Փաստաբանի բացատրությունից ակնհայտ է, որ Փաստաբանի և Դիմողի միջև ձեռք է բերվել պայմանավորվածություն առ այն, որ Փաստաբանն ընդամենը կփորձի կասեցնել Դիմողին Անշարժ գույքից վտարելու գործընթացը, իսկ այդ ընթացքում Դիմողը կփորձի կարգավորել իր հարցերը կամ հաշտության գալ Անշարժ գույքի սեփականատիրոջ հետ:

Անշարժ գույքը սեփականության իրավունքով Դիմողին անցնելու կամ Անշարժ գույքի նկատմամբ Դիմողի սեփականության իրավունքը ձևակերպելու վերաբերյալ որևէ համաձայնություն Դիմողի և Փաստաբանի միջև ձեռք չի բերվել: Եվ այդպես էլ եղել է՝ ՀՀ ոստիկանության կողմից Դիմողի ներխուժումը կանխելու գործողությունները վիճարկվել են դատական կարգով: Փաստաբանի բացատրության և բացատրությանը կից ներկայացված «Դատալեքս դատական տեղեկատվական համակարգի կայքից կատարված քաղվածքների բովանդակությունից պարզ է դառնում, այն որ Փաստաբանին պատկանող «ԳԱԼԻԿՅԱՆ» ՍՊԸ փաստաբանական գրասենյակի աշխատող փաստաբան Կարինե Ղաշանգյանի կողմից ՀՀ վարչական դատարան է ուղարկվել գործողությունների կատարման հայց: Հայցադիմումին կից նաև ներկայացվել է հայցի ապահովում ձեռնարկելու վերաբերյալ միջնորդություն:

Հայցադիմումով փաստաբանը խնդրել է պարտավորեցնել ՀՀ ոստիկանությանը ձեռնպահ մնալ ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 1-ին թաղամաս 29/47 բնակարան հասցեի անշարժ գույքից Դիմողին վտարման գործողության իրականացումից, մինչև նշված հասցեում գտնվող Անշարժ գույքի վերաբերյալ քաղաքացիական վեճի՝ այն է թիվ ԱՎԴ1/1558/02/18 քաղաքացիական գործի լուծումը: Ներկայացված հայցի հիման վրա հարուցվել է **թիվ ՎԴ/8884/05/23 վարչական գործը:**

Նշված վարչական գործով ՀՀ վարչական դատարանը **2021 թվականի օգոստոսի 17-ին** կայացրած որոշմամբ հայցադիմումը ընդունել է վարույթ և բավարարել է հայցի ապահովման միջոց ձեռնարկելու վերաբերյալ միջնորդությունը, որով որոշել է **արգելել Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը իրականացնելու վտարելու գործողություն ք. Երևան, Դավթաշեն 1-ին թաղամաս 29/47 բնակարանից մինչև սույն գործով վերջնական դատական ակտի կայացումը:**

ՀՀ վարչական դատարանը **2022 թվականի հուլիսի 28-ին** կայացրել է որոշում թիվ ՎԴ/8884/05/21 վարչական գործի վարույթը կարճելու վերաբերյալ: Նշված որոշմամբ վերացել է նաև հայցի ապահովման միջնորդությունը: **Այսինքն շուրջ 11 ամիս շարունակ Դիմողի վտարելու վարույթը կասեցված է եղել:**

Այն փաստը, որ Դիմողի և Փաստաբանի միջև ձեռք է բերվել պայմանավորվածություն ընդամենը վտարման գործընթացը կասեցնելու վերաբերյալ, ***մինչև որ Դիմողի կարգավորի իր հարցերը*** *հաստատվում են նաև ներքոնշյալ հանգամանքով.*

Դեռևս 2018 թվականի դեկտեմբերի 7-ին գրանցվել է Լիլիթ Սեդրակյանի սեփականության իրավունքը ՀՀ, քաղաք Երևան, Դավթաշեն 1-ին թաղամաս, թիվ 29/47 բնակելի տուն հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ **/հիմք՝ թիվ 07122018-01-0207 սեփականության վկայականը/:** Լիլիթ Սեդրակյանի ներկայացուցիչ Հայկ Սողոմոնյանը հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: Ներկայացված հայցադիմումի հիման վրա հարուցվել է **թիվ ԵԴ/8130/02/20 քաղաքացիական գործը**: Հայցադիմումը կրկին ներկայացվելուց հետո այն ընդունվել է վարույթ 2020 թվականի մայիսի 8-ին: Վճռի բովանդակությունից պարզ է դառնում, որ Դիմողի ներկայացուցիչ Կարինե Ղաշանգյանի կողմից 2021 թվականի մարտի 16-ին տեղի ունեցած նիստի ժամանակ **միջնորդել է գործի քննությունը հետաձգել՝ հաշտության համաձայնության հարցը քննարկելու նպատակով: Ըստ էության նպատակ հետապնդելով հնարավորություն ընձեռնելու Դիմողին հաշտության համաձայնության գալու եղանակով կարգավորել իր հարցերը:**

Դիմողն իր դիմում նշել է հետևյալը. *«Նա* ***ասում էր միշտ, ինչքան շատ ապրեք*** *այդ տան մեջ,* ***այնքան ձեզ օգուտ*** *կլինի* ***միշտ ասում էր, ինչքան ժամանակ շահեք, այնքան*** *ձեզ համար* ***լավ կլինի****»:* Նշվածից նույնպես պարզ է դառնում, որ փաստաբանն ի սկզբանե գիտեր, որ Անշարժ գույքը Դիմողի սեփականության իրավունքով ձևակերպելն անհնար է դարձել և միշտ ու անընդհատ զգուշացրել է Դիմողին այդ մասին և առաջարկել է ընդամենը ժամանակ շահելու և հնարավորինս երկար ժամանակահատվածում Անշարժ գույքում բնակվելու համար, դատական գործընթացներ սկսել, կասեցնել վտարման վարույթը, մինչև Դիմողը կկարգավորի իր հարցերը:

2022 թվականի ապրիլի 6-ին Փաստաբանը ներկայացրել է միջնորդություն թիվ ԵԴ/8130/02/20 քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին, որը Դիմողի ներկայացուցիչ Մանուշակ Թադևոսյանն ընկալել էր որպես ի վնաս Դիմողի գործողություն, սակայն 2023 թվականի հուլիսի 13-ին տեղի ունեցած Հանձնաժողովի նիստի ժամանակ ասաց, որ այդ մասով դժգոհություն չունի, ուղղակի ցանկանում էր, որ Դիմողին չվտարեին:

Պայմանագրի շրջանակներում նաև Անշարժ գույքի վերաբերյալ գործարքը վավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմում է ներկայացվել Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, որի հիման վրա հարուցվել է **թիվ ԱՎԴ1/1558/02/18 քաղաքացիական գործը**, որի ավարտով էր պայմանավորված **թիվ ՎԴ/8884/05/21 վարչական գործի տևողությունը: Թիվ ԱՎԴ1/1558/02/18 քաղաքացիական գործով** Փաստաբանին պատկանող

«ԳԱԼԻԿՅԱՆ» ՍՊԸ փաստաբանական գրասենյակի աշխատող փաստաբան Կարինե Ղաշանգյանն իրականացրել է ներկայացուցչություն ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում և ՀՀ վճռաբեկ դատարանում:

Պայմանագրի շրջանակներում Փաստաբանի կողմից 2015 թվականի սեպտեմբերի 17-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Արտակ Մարգարյանի, երրորդ անձ «Էքսպրես կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի՝ Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին, որի հիման վրա հարուցվել է **թիվ ԵԱԴԴ/3529/02/15 քաղաքացիական գործը**, որը վարույթ է ընդունվել 2015 թվականի սեպտեմբերի 23-ին: Հայցադիմումին կից ներկայացվել է նաև հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն: Դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 23-ին կայացված որոշմամբ **կիրառվել է հայցի ապահովման միջոց, այն է՝ արգելվել է Արտակ Մարգարյանին և «Էքսպրես կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲ ընկերությանն օտարել կամ որևէ այլ ձևով իրացնել Երևան քաղաքի Դավթաշեն 1-ին թաղամասի 29/31-րդ հասցեում գտնվող բնակելի շենքի 4-րդ հարկի թիվ 48 բնակարանը**: Սույն գործով 2017 թվականի դեկտեմբերի 28-ին տեղի ունեցած դատաքննության ժամանակ Փաստաբանի կողմից ներկայացված միջնորդության հիման վրա Դատարանը կայացրել է վճիռ, որով կարճել է թիվ ԵԱԴԴ/3529/02/15 քաղաքացիական գործը՝ հայցից հրաժարվելու հիմքով: **Այսինքն շուրջ 2 տարի 3 ամիս շարունակ Անշարժ գույքը օտարելու կամ որևէ այլ ձևով իրացնելու գործընթացը կասեցված է եղել:**

Ամփոփելով վերոգրյալը կարող ենք նշել, որ Փաստաբանը, վերը նշված 4 դատական գործերով Դիմողին իրավաբանական օգնություն ցույց տալու շրջանակներում, իր մասնագիտական պարտականությունները կատարել է բարեխիղճ և Դիմողին նախապես զգուշացրել է հնարավոր բացասական իրավական հետևանքների, ռիսկերի մասին: Մասնավորապես, բացատրել է Դիմողին այն, որ Անշարժ գույքը Դիմողի սեփականության իրավունքով ձևակերպելը դարձել է անհնար և միակ հնարավոր լուծումը Անշարժ գույքի օտարման կամ իրացման, ինչպես նաև Անշարժ գույքից Դիմողի վտարման կամ ներխուժումը կանխելու գործընթացների կասեցմամբ ժամանակ շահերն է, մինչև որ Դիմողը կարգավորեր իր խնդիրները:

Այսպիսով Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը գործել է բարեխիղճ, իսկ կարգապահական վարույթը Փաստաբանին վերագրվող Կանոնագրքի 3.5.5 ենթակետի առերևույթ խախտման մասով ենթակա է կարճման:

7.2 Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի ենթադրյալ խախտման մասով Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել հետևյալը.

Կանոնագրքի 3.8.4 ենթակետի համաձայն՝ *պայմանագիրը լուծելիս* ***փաստաբանը***

պարտավոր է՝

1) վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել ***պայմանագրով ստացած հոնորարի այն մասը****, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ.*

2) վերադարձնել հանձնարարության կատարման հետ կապված ծախսերի հատուցման համար նախատեսված և ***չծախսված միջոցները****.*

3) վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում ***իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը*** *(փաստաբանը կարող է այդ փաստաթղթերի պատճենները պահպանել):*

Կանոնագրքի վերը նշված կանոնի բովանդակությունից պարզ է դառնում, որ վճարովի իրավաբանական օգնություն ցույց տալու մասին պայմանագիրը լուծելու դեպքում, փաստաբանը պարտավոր վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ ձեռք բերված բոլոր փաստաթղթերի բնօրինակները: Փաստաբանը պարտավոր է նաև վստահորդին վերադարձնել նախապես վճարված հոնորարի այն մասը, որի դիմաց ծառայություն չի մատուցվել կամ աշխատանք չի կատարվել փաստաբանի կողմից: Բացի այդ, փաստաբանը պարտավոր է վերադարձնել վստահորդին փաստաբանական ծախսերի չծախսված միջոցները:

Այս առումով Փաստաբանն իր երկու բացատրություններում նշել է, որ նյութեր և ապացույցներ ներկայացնելու հնարավորություն չունի, քանի որ նյութերը երեք տարի պահվելուց հետք ոչնչացվել են, **իսկ այն փաստաթղթերը, այդ թվում՝ բնօրինակները, որոնք ենթակա էին վերադարձման, վերադարձվել են Գագիկ Վարդանյանին:** Այսինքն ստացվում է, որ վստահորդին փաստաթղթերը վերադարձնելու պարտականությունը Փաստաբանը կատարել է:

Փաստաբանի 2023 թվականի մայիսի 23-ին կազմված և Պալատ մուտքագրված բացատրության և Դիմողի դիմումի բովանդակությունից երևում է, որ հանձնարարության կատարման համար ծախսերի հատուցման համար չծախսված միջոցներ չեն եղել: Ուստի նշված դրամական միջոցները վերադարձնելու հիմքեր չեն ծագել:

Ինչ վերաբերվում է Պատասխանողի կողմից Դիմողին հոնորարի այն մասը վերադարձնելուն, որի դիմաց աշխատանք չի կատարվել, ապա Պատասխանողին նախապես վճարված հոնորարը Դիմողին վերադարձման ենթակա չէ հետևյալ պատճառաբանությամբ:

2015 թվականի ապրիլի 7-ին Դիմողի և Փաստաբանի միջև կնքված փաստաբանական ծառայություն մատուցելու մասին պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ *Պատվիրատուի հանձնարարությամբ Կատարողը ստանձնում է ներկայացնել պատվիրատուի շահերը դատական բոլոր ատյաններում:*

Պայմանագրի նշված դրույթից պարզ է դառնում, որ Փաստաբանը պարտավորվել է

ներկայացնել Դիմողի շահերը առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում: Ինչպես արդեն նշել է սույն որոշման 7.1 կետում Փաստաբանի կողմից տրված բացատրություններից և Դիմողի դիմումից ակնհայտ է, որ Անշարժ գույքը Դիմողի սեփականության իրավունքով ձևակերպելը դարձել է անհնար և միակ հնարավոր լուծումը Անշարժ գույքի օտարման կամ իրացման, ինչպես նաև Անշարժ գույքից Դիմողի վտարման կամ ներխուժումը կանխելու գործընթացների կասեցմամբ ժամանակ շահերն էր, մինչև որ Դիմողը կարգավորեր իր խնդիրները: Այս առումով հարկ է նշել, որ ժամանակ շահել հնարավոր էր միայն Անշարժ գույքի նախկին սեփականատեր, գրավատու՝ Արտակ Մարգարյանի, գրավառու՝ «Էքսպրես կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի, իրական սեփականատեր՝ Լիլիթ Սեդրակյանի և ՀՀ ոստիկանության դեմ հայցեր հարուցելով, որպեսզի արդյունքում հասնել նրան, որ ՀՀ դատարանների կողմից հայցի ապահովման միջոցներ կիրառվեին, որոնք ուղղված կլինեին Անշարժ գույքի, օտարման, իրացման և Անշարժ գույքից Դիմողին վտարելու ընթացակարգերի կասեցմանը: Նշվածի համատեքստում Փաստաբանը ամբողջ ծավալով մատուցել է իր ծառայությունները: Փաստաբանը և իր գրասենյակի աշխատող փաստաբան Կարինե Ղաշանգյանը իրականացրել են ներկայացուցչություն թիվ ԵԱԴԴ/3529/02/15, ԱՎԴ/1558/02/18, ԵԴ/8130/02/20 քաղաքացիական գործերով և ՎԴ/8884/05/21 վարչական գործով: Թիվ ԵԱԴԴ/3529/02/15 քաղաքացիական գործով և ՎԴ/8884/05/21 վարչական գործով ձեռնարկվել են հայցի ապահովման միջոցով: **Արդյունքում 2015-2022 թվականն ընկած ժամանակահատվածում շուրջ 7 տարի Դիմողը չհանդիսանալով Անշարժ գույքի սեփականատեր, հնարավորություն է ունեցել անարգել տիրապետել անշարժ գույքը:** Հետևաբար Փաստաբանը կատարել է փաստաբանական ծառայություններն ամբողջ ծավալով և Փաստաբանին վճարված հոնորարը ենթակա չէ վերադարձման:

Հարկ է նաև ընդգծել այն փաստը, որ պայմանագրի 3.1 կետի ուժով ծառայությունների մատուցման վճարը կազմել է 1.890.000 (մեկ միլիոն ութ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ: Սակայն Դիմողի դիմումին կից ներկայացված վճարման անդորրագրերից երևում է, որ Դիմողը Պատասխանողին վճարել է միայն 1.190.000 (մեկ միլիոն հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամը, իսկ մնացած 700.000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամը չի վճարել: Մասնավորապես՝ Դիմողն իր դիմումին կից ներկայացրել է թվով 5 վճարման անդորրագրեր, որոնցից երկուսը նույն 2015 թվականի ապրիլի 7-ին կազմված 475.000 (չորս հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամի վճարումը հավաստող № 48 անդորրագրերն են: Մյուս երեք վճարման անդորրագրերով հաստատվում է, որ Դիմողը Պատասխանողին վճարել է համապատասխանաբար՝ 235.000 (երկու հարյուր երեսունհինգ հազար), 240.000 (երկու հարյուր քառասուն հազար) և դարձյալ 240.000 (երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ գումարները:

Չնայած այն հանգամանքին, որ Պայմանագրով նախատեսված գումարը Փաստաբանին ամբողջությամբ չի վճարվել, Փաստաբանը և նրա աշխատող փաստաբան

Կարինե Ղաշանգյանը չեն պահանջել Դիմողին գումարի չվճարված մասը և իրենց հնարավորությունների սահմաններում, ամբողջ ծավալով կատարել են Պայմանագրից բխող իրենց պարտականությունները:

Ուստի, Հանձնաժողովը գտնում է, որ Կանոնագրքի 3.8.4 ենթակետերի խախտման մասով կարգապահական վարույթը ևս ենթակա է կարճման:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Գարիկ Գրիգորի Գալիկյանի (արտոնագիր՝ թիվ 644) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 և 3.8.4 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-23016 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-23016-2-Ա
03 օգոստոսի 2023թ.
ք.Երևան